Էդուարդ – Բարև պարոն Արարատ, ես մի բան եմ ուզում իմանալ հիմա, եթե ես անեմ ամեն հնարավորը իմ սխալը թույլ տալու համար, բայց եթե ձեր խաղացողները չարդարացնեն իրենց և չհաղթեն, ես կստանա՞ մ իմ գումարը, որովհետև ես ուղղակի պարտավոր եմ անել իմ սխալը, և դրանից հետո նրանք պետք է գոլ վաստակեն

Արարատ – լսիր Եդու, արի կոնկրետացնենք ամեն ինչ, դու գիտես թե դու ինչ պետք է անես

Էդուարդ – Այո, ես գիտեմ՝ ես ինչ պետք է անեմ

Արարատ – Հիմա ասեմ քեզ, որ եթե դու ոչինչ չանես և մենք էլի ունենաք զրո արդյունք, դու էլի կստանաս գումարը, իմ ընկեր, մենք քննարկել ենք այդ ամենը և արի հիմա ոչինչ չփոխենք

Էդուարդ – Ոչ ոչ, ես ոչինչ չեմ փոխում, հնարավոր է ես անում եմ ինչ որ բան, որ դուք 11 մետրանոց հարված վաստակենք, բայց ձեր խաղացողները գոլ չեն խփում, դա ևս մեկ ապացույց է

Արարատ – Լսիր, լսիր

Էդուարդ – Այո, ես լսում եմ

Արարատ – Բոլորը տեսնում են, թե դու ինչ ես անում դաշտում, բոլորը, և բոլորը հասկանում են, ես նույնպես լինելու եմ մարզադաշտում, եթե դու ոչինչ չանես այդ ճանապարհով, դու պետք է գումարը հետ վերադարձնես, բայց ես ասում եմ ոչ, եթե մենք հաղթենք, և եթե դու ոչինչ չանես դու այդ դեպքում ել կստանաս գումարը, հասկանում ես

Էդուարդ – Հասկանում եմ

Արարատ – Միակ ճանապարհը գումար վաստակելու դա մեր հաղթանակն է, խնդրում եմ արա ամեն ինչ

Էդուարդ – Իսկ եթե ես ամեն ինչ անեմ, բայց դուք չհաղթեք

Արարատ – Իմ ընկեր, ես չեմ կարող պատասխանել քեզ հիմա, ես չեմ կարող պատասխանել, մենք պայմանավորվել ենք ամեն ինչի մասին, արի էլ ոչինչ չփոխենք

Էդուարդ – Ոչ, ես չեմ փոխում ոչինչ, գիտեք լինում է, որ դու ամեն ինչ անում ես, բայց որոշ խաղացողներ չեն կարողանում գոլ վաստակել

Արարատ – Ես քեզ մի բան ասեմ, արի հարգենք միմյանց

Էդուարդ – Ես գիտեմ դուք հարգում եք ինձ, ես էլ ձեզ եմ հարգում

Արարատ – Եթե ես խոստանում եմ մի բան, ես կպահեմ իմ խոստումը և ոչինչ չի փոխվի,

Էդուարդ – ուրեմն վաղը ես պետք է ձեզ ինչ որ բան ցույց տամ

Արարատ - արի էլ չխոսենք սրա մասին հեռախոսով, ուղղակի խնդրում եմ արա ամեն ինչ

Էդուարդ – լավ լավ, հաջողություն

Արարատ - Հաջողություն